ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 85-Ա/2 «23» 01 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի № 146-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 9-րդ հոդվածի «ա» կետը՝ հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2017 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ֆեդերացիաներին ֆինանսական աջակցության չափի հաշվարկման կարգը, ֆինանսական աջակցության չափը հաշվարկող հանձնաժողովի կազմը և գործունեության կարգը հաստատելու մասին» № 146-Ա/1 հրամանի հավելված N 1-ը և հավելված N 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար հավելված N 1-ի և հավելված N 2-ի:

2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

1/22/2024

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2024 թվականի. _____ _____-ի
№ հրաման

«Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի
2017 թվականի հուլիսի 24-ի
№ 146-Ա/1 հրաման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «1041. Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի «11001. ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» միջոցառմամբ նախատեսված միջոցներից Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին (այսուհետ՝ ֆեդերացիա) ֆինանսական միջոցների տրամադրման և հատկացման պայմանները, չափը, հաշվարկման պայմանական խմբերը և գործակիցները:

II.Նպատակը

2. Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «1041. Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի «11001. ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» միջոցառմամբ նախատեսված ֆինանսական միջոցները հատկացվում են այն ֆեդերացիաներին, որոնց գործունեությունն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում տվյալ մարզաձևի զարգացմանը, բարձր արդյունքների նվաճմանը, Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչմանը, միջազգային մարզական

կառույցներին ինտեգրմանը, Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացմանը, ֆիզիկապես ուժեղ պատանիների և երիտասարդների դաստիարակմանը և կայացմանը:

III. Ֆինանսական աջակցություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը

3. Ֆեդերացիան ֆինանսական աջակցություն ստանալու համար ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (այսուհետ Նախարարություն) է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը (այսուհետ՝ հայտ)՝

1) ֆեդերացիայի ղեկավար մարմնի նիստի արձանագրությունը ֆեդերացիայի տվյալ տարվա կատարած աշխատանքների և գալիք տարում իրականացվող մարզական միջոցառումների մասին,

2) Հայաստանի Հանրապետության առաջնությունների անցկացման կանոնադրությունը՝ հաստատված ֆեդերացիայի նախագահի կողմից, միջոցառումների անցկացման օրացուցային պլանը, ծախսերի նախահաշիվներն իրենց եռամսյակային բացվածքներով,

3) ֆեդերացիայի նախագահի կողմից հաստատված հավաքականների կազմերը (մեծահասակների, երիտասարդների և պատանիների),

4) հաշվետու տարում ֆեդերացիայի և նախարարության միջև կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման մասին հաշվետվությունը:

4. Ֆեդերացիան առաջին անգամ ֆինանսական աջակցություն ստանալու համար, բացի սույն կարգի 3-րդ կոտում նշված փաստաթղթերը, Նախարարություն է ներկայացնում նաև հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում,

2) ֆեդերացիայի պետական գրանցման վկայականը, կանոնադրությունը և դրանց պատճենները,

3) «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀԱՕԿ) կոլեկտիվ անդամ լինելու մասին տեղեկանքը,

4) համապատասխան մարզաձևի միջազգային ֆեդերացիային անդամակցելու վերաբերյալ հիմնավորող փաստաթուղթը և դրա պատճենը,

5) մարզաձևի զարգացման ծրագիրը՝ ներառելով ակնկալվող արդյունքները, մարզական միջոցառումների օրացուցային պլանը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) միջոցառման կազմակերպման և անցկացման կանոնակարգով նախատեսված չափորոշիչների սահմաններում կազմված ֆինանսական միջոցների ծախսերի նախահաշիվները,

6) նախորդ երեք տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության առաջնությունների անցկացման արձանագրությունների քաղվածքը:

IV. Ֆինանսական միջոցներ հատկացնելու համար Ֆեդերացիաներին ներկայացվող պահանջները և հայտի մերժման հիմքերը

5. Ֆինանսական աջակցություն հատկացվում է այն ֆեդերացիաներին, որոնք միջազգային պաշտոնական միջոցառումներում (օլիմպիական խաղեր, աշխարհի և Եվրոպայի առաջնություններ, շախմատային համաշխարհային օլիմպիադա, համաշխարհային ուսանողական խաղեր, պատանեկան օլիմպիական խաղեր և այլն) նվաճել են բարձր արդյունքներ, և (կամ) ապահովված են բարձր որակավորում ունեցող մարզիչներով, և (կամ) ունեն մարզաձևի զարգացման համար համապատասխան մարզաբազաներ, և (կամ) մարզական ավանդույթներ:

6. Հատկացվող ֆինանսական միջոցները պետք է բացառապես ուղղվեն ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստմանը, ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումների անցկացմանը և (կամ) դրանց մասնակցությանը: Սույն կարգով հատկացված ֆինանսական աջակցության միջոցներից չի թույլատրվում կատարել ֆեդերացիայի ղեկավար կազմի և աշխատակիցների աշխատավարձերին (բացառությամբ գնումների համակարգողների), տնտեսական ապարանքների ձեռքբերմանը, կոմունալ, կենցաղային ծառայություններին ուղղված ծախսեր: Ֆեդերացիային հատկացվող ֆինանսական միջոցներից անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

7. Ֆեդերացիան հաջորդ տարվա ֆինանսական աջակցություն ստանալու համար հայտը Նախարարություն է ներկայացնում մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 15-ը (2024 թվականին կնքվող պայմամագրերի համար՝ մինչև 2024 թվականի հունվարի 24-ը):

8. Ֆեդերացիայի ներկայացված հայտը ենթակա է մերժման, եթե.

1) Նախարարության կողմից ուսումնասիրությունների արդյունքում պարզվում է, որ ֆեդերացիայի ներկայացրած հայտում առկա են անճշտություններ,

2) ֆեդերացիան չի նախատեսել անցկացնել Հայաստանի Հանրապետության մեծահասակների, երիտասարդների և (կամ) պատանիների առաջնություններ՝ բացառությամբ հիմնավոր դեպքերի,

3) ֆեդերացիայի կողմից ներկայացված հայտը չի ներկայացվել սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերի պահանջներին համապատասխան,

4) ֆեդերացիայի հայտը ներկայացվել է սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետից ուշ:

V. Ֆինանսական աջակցության չափի հաշվարկումը՝ ըստ պայմանական խմբերի

9. Մարզաձևերի ֆեդերացիաները բաժանվում են հաշվարկման պայմանական երեք խմբի՝

1) 1-ին խումբ՝ հենակետային (ծանրամարտ, հունահռոմեական ըմբշամարտ, ազատ ոճի ըմբշամարտ, բռնցքամարտ, սպորտային մարմնամարզություն, հրաձգություն, շախմատ, աթլետիկա),

2) 2-րդ խումբ՝ հեռանկարային (ձյուդո, բասկետբոլ, հեծանվային սպորտ, սուսերամարտ, կարատե, ջրացատկ, գեղասահք, սամբո, վոլեյբոլ, դահուկային սպորտ, լող, թաեքվոնդո, ուշու),

3) 3-րդ խումբ՝ ծրագրային (հանդբոլ, սեղանի թենիս, թենիս, գեղարվեստական մարմնամարզություն, բադմինթոն, նետաձգություն, կանոէ, խոտի հոկեյ, առագաստանավային սպորտ, ակրոբատիկա, ջրագնդակ, ժամանակակից հնգամարտ, սպորտային պարեր և այլ մարզաձևեր):

10. Սույն կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետում նշված հենակետային խմբի մարզաձևերի ֆեդերացիաների մեկնարկային գումարը կարող են հաշվարկվել հետևյալ միջոցառումների ծախսերի նախահաշվարկային արժեքներից.

1) Հայաստանի Հանրապետության առաջնություններ (մեծահասակ, երիտասարդ, պատանի),

2) Աշխարհի առաջնություններ (մեծահասակ, երիտասարդ, պատանի),

3) Եվրոպայի առաջնություններ (մեծահասակ, երիտասարդ, պատանի),

4) ուսումնամարզական հավաքները (մեծահասակ, երիտասարդ, պատանի), այդ թվում՝ մեծահասակների հավաքական՝ առավելագույնը 4 ուսումնամարզական հավաք (որից 1-ը՝ արտերկրում), երիտասարդների հավաքական՝ առավելագույնը 2 ուսումնամարզական հավաք, պատանիների հավաքական՝ առավելագույնը 2 ուսումնամարզական հավաք,

5) առավելագույնը միջազգային 2 մրցաշարեր մեծահասակների հավաքականների համար (այդ թվում աշխարհի և Եվրոպայի գավաթի խաղարկություններ, շախմատի համաշխարհային օլիմպիադա և համաշխարհային ուսանողական ունիվերսիադա),

6) Օլիմպիական խաղերի տարում լրացուցիչ ֆինանսավորում կստանան այն ֆեդերացիաները, որոնց հավաքականների մարզիկները նվաճել են օլիմպիական խաղերի ուղեգրեր՝ օլիմպիական խաղերին լավագույնս նախապատրաստվելու համար (1 միջազգային մրցաշար և 1 ուսումնամարզական հավաք):

11. Սույն կարգով նախատեսված ֆինանսավորման պայմանագրի կնքումից հետո սույն կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետում նշված հենակետային խմբի մարզաձևերի ֆեդերացիաներն ամսական ֆինանսավորում ստանալու նպատակով միջոցառումների հայտեր կարող են ներկայացնել մեկնարկային գումարի ձևավորման համար հիմք հանդիսացող միջոցառումներից տարբերվող, սակայն օրացուցային պլանով հաստատված այլ միջոցառումների համար՝ պահպանելով օրենսդրությամբ սահմանված նորմատիվները:

12. Սույն կարգի 9-րդ կետի 2-ին ենթակետում նշված հեռանկարային մարզաձևերի ֆեդերացիաների մեկնարկային գումարը գոյանում է վերջին երեք տարիներին ֆեդերացիային հատկացված գումարի միջին թվաբանականի հաշվարկով:

VI. Ֆինանսական միջոցների չափի հաշվարկումը՝ ըստ գործակցի

13. Սույն կարգի 5-րդ գլխով հաշվարկված ֆինանսական միջոցների չափից բացի պետական աջակցություն ստացող ֆեդերացիային հատկացվում է նաև ֆինանսական միջոցներ ըստ արդյունքային ցուցանիշների, որի հաշվարկն իրականացվում է հայտը ներկայացնելու տարվա նվաճած յուրաքանչյուր բարձր արդյունքի համար բազային աշխատավարձի 100-ապատիկի չափով (օլիմպիական մարզաձևերի համար) կամ բազային աշխատավարձի 50-ապատիկի չափով (ոչ օլիմպիական մարզաձևերի համար)՝ յուրաքանչյուր արդյունքի համար կիրառելով նաև հետևյալ գործակիցները.

1) Օլիմպիական խաղեր

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	50
2-րդ տեղ	40
3-րդ տեղ	30

2) Աշխարհի առաջնություն

Մեծահասակներ

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	40
2-րդ տեղ	35
3-րդ տեղ	30

Երիտասարդներ

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	15
2-րդ տեղ	10
3-րդ տեղ	8

Պատանիներ

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	7
2-րդ տեղ	5
3-րդ տեղ	4

3) Համաշխարհային ուսանողական խաղեր

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	10
2-րդ տեղ	8
3-րդ տեղ	7

4) Եվրոպայի առաջնություն

Մեծահասակներ

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	20
2-րդ տեղ	15
3-րդ տեղ	10

Երիտասարդներ

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	8
2-րդ տեղ	7
3-րդ տեղ	6

Պատանիներ

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	4
2-րդ տեղ	3
3-րդ տեղ	2

5) Պատանեկան օլիմպիական խաղեր

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	15
2-րդ տեղ	10
3-րդ տեղ	8

6) Շախմատի համաշխարհային օլիմպիադա

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	15
2-րդ տեղ	10
3-րդ տեղ	8

14. Խաղային մարզաձևերի թիմային առաջնություններում նվաճած բարձր արդյունքների դեպքում կիրառվում է սույն կարգի 5-րդ գլխով սահմանված գործակիցների կրկնակի չափը:

V. Ֆինանսական աջակցության պայմանագրի կնքումը

15. Սույն կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետում նշված հենակետային և 9-րդ կետի 2-ին ենթակետում նշված հեռանկարային խմբերի մարզաձևերի ֆեդերացիաների հայտերը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Նախարարության պատասխանատու ստորաբաժանումը ուսումնասիրում է ստացած հայտում առկա փաստաթղթերի ամբողջականությունը, հիմնավորվածությունը և ոչ ֆինանսական ցուցանիշները և.

1) առարկություններ չունենալու դեպքում նախարարության գլխավոր քարտուղարին է ներկայացնում առաջարկություն համապատասխան ֆինանսավորման պայմանագիր կնքելու վերաբերյալ, որը սահմանված կարգով մակագրվում է նախարարության ֆինանսաբյուջետային գործընթացն իրականացնող ստորաբաժանմանը,

2) առարկություններ ունենալու դեպքում՝ ֆեդերացիային տեղյակ է պահում հայտում առկա թերությունների, տվյալների անճշտության մասին: Ֆեդերացիան պարտավոր է երեք աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և շտկել տվյալները: Նշված

ժամկետում թերությունների չվերացման և/կամ տվյալների չշտկման դեպքում, համապատասխան գրությամբ, ֆեդերացիային տեղյակ է պահվում ֆինանսավորում չտրամադրվելու մասին, իսկ տվյալների թերությունների վերացման և տվյալների շտկման դեպքում նախարարության գլխավոր քարտուղարին է ներկայացնում նշված տեղեկատվության վերաբերյալ իր դիրքորոշումը և պայմանագիր կնքելու վերբերյալ առաջարկություն, որը սահմանված կարգով մակագրվում է ֆինանսաբյուջետային գործընթացն իրականացնող ստորաբաժանմանը:

16. Նախարարության ֆինանսաբյուջետային գործընթացն իրականացնող ստորաբաժանումը ուսումնասիրում է սույն կարգի 15-րդ կետում նշված և ստորաբաժանմանը մակագրված տեղեկատվությունում առկա ֆինանսական ցուցանիշները և.

1) առարկություն չունենալու դեպքում իրականացնում է ֆինանսավորման չափի հաշվարկ, նախապատրաստում և ստորագրման է ներկայացնում համապատասխան ֆինանսավորման պայմանագիր,

2) առարկություններ ունենալու դեպքում այն վերադարձնում է լրամշակման:

17. Սույն կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ծրագրային խմբերի մարզաձևերի ֆեդերացիաների ֆինանսական աջակցության հաշվարկման համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով ստեղծվում է ֆինանսական աջակցության չափը հաշվարկող հանձնաժողով, որի կազմը և գործունեության կարգը հաստատվում է սույն հրամանի N 2 հավելվածով:

18. Հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ծրագրային խմբերի մարզաձևերի ֆեդերացիաների կողմից ներկայացված հայտերը՝ Նախարարին ներկայացնում է առաջարկություններ այդ ֆեդերացիաների ֆինանսավորման վերաբերյալ:

19. Նախարարի համապատասխան հանձնարարականի առկայության դեպքում Նախարարության ֆինանսաբյուջետային գործընթացն իրականացնող ստորաբաժանումը նախապատրաստում և ստորագրման է ներկայացնում համապատասխան ֆինանսավորման պայմանագիր՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելով ներկայացված ֆինանսավորման չափի վերահաշվարկ:»:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2024 թվականի. _____ _____-ի
№ հրաման

«Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի
2017 թվականի հուլիսի 24-ի
№ 146-Ա/1 հրաման

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՇՎԱՐԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

1. Հանձնաժողովի կազմը

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ֆեդերացիաներին ֆինանսական աջակցության չափի հաշվարկման կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ծրագրային խմբերի մարզաձևերի ֆեդերացիաների ֆինանսական աջակցության հաշվարկման համար Նախարարի հրամանով ստեղծվում է ֆինանսական աջակցության չափը հաշվարկող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հետևյալ կազմով.

1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ՝ նախագահ,

2) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սպորտի քաղաքականության վարչության պետ,

3) Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետ,

4) Նախարարության սպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ,

5) Նախարարության սպորտի քաղաքականության վարչության սպորտի բարձրագույն նվաճումների բաժնի պետ,

6) Նախարարության սպորտի քաղաքականության վարչության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի պետ,

7) Մանկապատանեկան սպորտի բաժնի պետ,

8) Իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր մասնագետ:

II. Հանձնաժողովի գործունեության կարգը

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է գործող իրավական ակտերով, ինչպես նաև Նախարարի հրամանով հաստատված Հայաստանի

Հանրապետության պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ֆեդերացիաներին ֆինանսական աջակցության չափի հաշվարկման կարգով:

3. Հանձնաժողովի գործունեությունը կազմակերպվում է նիստերի միջոցով: Նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

4. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին:

5. Որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

6. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը,

2) նշանակում է հանձնաժողովի նիստի անցկացման օրը և ժամը,

3) հրավիրում է հանձնաժողովի նիստերը և վարում դրանք,

4) անհրաժեշտության դեպքում քննարկումներին ներգրավում է մասնագետների,

5) հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում նրա պարտականությունների կատարումը ժամանակավորապես հանձնարարում է հանձնաժողովի անդամներից մեկին,

6) կազմակերպում է հանձնաժողովի ընթացիկ աշխատանքները:

7) իրականացնում է սույն կարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

7. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին,

2) մասնակցում է քվեարկությանը՝ քվեարկելով կողմ կամ դեմ,

4) իրականացնում է սույն կարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

8. Հանձնաժողով ստեղծելու մասին Նախարարի հրամանով նշանակվում է նաև հանձնաժողովի քարտուղար, ով՝

1) նախապատրաստում է հանձնաժողովի նիստերի անցկացումը,

2) հանձնաժողովի նիստի անցկացման օրվա և ժամի մասին ծանուցում է հանձնաժողովի անդամներին նիստից 3 օր առաջ,

3) կազմում նիստերի արձանագրություններ,

4) իրականացնում է սույն կարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

9. Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամ չէ, այդ թվում՝ չի մասնակցում քվեարկությանը:

10. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրա հանձնարարությամբ հանձնաժողովի նախագահի լիազորություններն իրականացնում է հանձնաժողովի անդամներից մեկը:

11. Հանձնաժողովը ուսումնասիրում է Նախարարի հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ֆեդերացիաներին ֆինանսական աջակցության չափի հաշվարկման կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ծրագրային խմբերի մարզաձևերի ֆեդերացիաների կողմից ներկայացված հայտերը և Նախարարին ներկայացնում է առաջարկություններ այդ ֆեդերացիաների ֆինանսավորման վերաբերյալ՝ նկատի ունենալով, որ առաջնայնություն պետք է տրվի այն ծրագրերին, որոնք.

1) ուղղված են Հայաստանի Հանրապետությունում տվյալ մարզաձևի զարգացմանը, բարձր արդյունքների նվաճմանը, Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչմանը, միջազգային մարզական կառույցներին ինտեգրմանը, Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացմանը, ֆիզիկականապես ուժեղ պատանիների և երիտասարդների դաստիարակմանը և կայացմանը,

2) բխում են Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2024-2030 թվականների զարգացման ռազմավարությունից և ռազմավարության գործողությունների պլանից,

3) բացի պետական բյուջեից, ունեն նաև այլ ֆինանսավորող գործընկերներ:

12. Սահմանել, որ Նախարարի հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ֆեդերացիաներին ֆինանսական աջակցության չափի հաշվարկման կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետում նշված հենակետային և 9-րդ կետի 2-ին ենթակետում նշված հեռանկարային խմբերի մարզաձևերի ֆեդերացիաները չեն կարող ընդգրկվել կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ծրագրային խմբերի մարզաձևերի ֆեդերացիաների կազմում:»: